

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը լսաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:
Հայտարարութիւնները համար վճարում են
խաբարանչիւր բառին 2 կոպէկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԴՐԱՎԱՆՆԵՐ ԵՒ ՔՆՆԱՔԱՆԵՐ ԼՐԱԴԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն ղրբըով և նոյն պրոգրամով: Մեր կը ստանանք սեփական
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսականը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թամազիւի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է գիտնէ հետևեալ հա-
ցէով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», Тифли, Редакция du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆՆԻ

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

Հարկաւոր կը լինէր.—ՆԵՐԿԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Կապալով հոգի վերցնելը Անդրկովկասում. Դա-
մակ Առաքելայից. Դամակ Առաքելայից. Դեր-
բին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքիա
և Գերմանիա. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒ-
ՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՐԿԱՌՈՐ ԿԸ ԼԻՆԵՐ

Առհասարակ եւրոպայի շատ քիչ է ծա-
նօթ արեւելքի հետ, նրա կեանքի և նրա
պահանջների հետ: Շատ անգամ միայն
է ծագել ծանօթացնել քաղաքակիրթ աշխար-
հը արեւելքի հետ, եւրոպայում հրատա-
րակվող մի որ և է պարբերական թերթի
միջոցով, սակայն այդ տեսակ հրատարա-
կութիւնները երբեք մեծ ազդեցութիւն չեն
գտնել, նախ որովհետեւ գործին անձեռն-
հաս անձերի ձեռքով են ղեկավարվել և
երկրորդ հիմնով են եւրոպայի այնպիսի
տեղում, որը ազատ չէ եղել այս ու այն
կողմնակի ազդեցութիւնից:

Ինչքան էլ աշխատէ մարդկութիւնը ըս-
տեղծել մի համաշխարհային լեզու, հազիւ
թէ որ և է ժամանակ նա կը հասնէ իր
այդ ցանկացած նպատակին: Բայց եւրոպա-
յում կայ արդէն մի լեզու, որը այսպէս թէ
այնպէս ամենից շատ է տարածված ամեն
ազգի ինտելիգենտ, կրթված շրջանների և
գիւյրամասնայի մէջ.—դա Ֆրանսերէն լե-
զուն է: Մեր կարծիքով ամենից ձեռնառու և
յարմար կը լինէր ծանօթացնել եւրոպայի
արեւելքի հետ, հիմնով եւրոպայի մի որ
և է երկրում մի թերթի Ֆրանսերէն լե-
զուով: Բայց, ի հարկէ, եթէ թերթի խմբ-
ագիրը եւրոպայի էլ լինէր, մշտական աշ-
խատակիցների խումբը, ինչն խմբագրու-
թիւնը, պէտք է բաղկացած լինէր ինտե-
լիգենտների պատկանող արեւելեան այլ և
այլ ազգերի ներկայացուցիչներից:

Երկու տարի է արդէն, որ Ունգարիայի
Պէշտ քաղաքում հրատարակվում է մի
թերթի Ֆրանսերէն լեզուով «Revue de
l'Orient» վերնագրով, որը նուիրված է
բոլոր արեւելեան ազգերի շահերին: Բայց,
որքան մենք կարողացանք նկատել այդ շա-
բաթթերթի ուղղութիւնից, նա կատա-
րելապէս անկախ չէ իր զատողութիւննե-
րում: Իր հայացքներում և փոքր ինչ
թիւրքերէն է: Այդ բացատրվում է դրանով,
որ թերթը հրատարակվում է Ունգարիա-
յում և մի ունգարացի խմբագրի ձեռքով,
իսկ ունգարացի, այդ քրիստոնէայ մօնղոլ-
ները, երբեք չեն կարող կատարելապէս ան-
կախ և անկողմնապահ կերպով դատել մի
որ և է հարցի վրա, որին այսպէս թէ այն-
պէս մասնակից են և իրանց ազգակից, ի-
րանց ցեղակից թիւրքերը, այդ մահմեդա-
նական մօնղոլները:

Թերթը այնտեղ է հասնում, որ մեծ հա-

մակութեամբ է վերաբերվում մահմե-
տականութեանը, մի վարդապետութեան,
որի գոյութեան պայմանն է անշարժու-
թիւնը, և մշտական խուլ բողոք որ և է
առաջադիմութեան դէմ:

Արեւելքի անկեղծ կերպով նուիրված մի
Ֆրանսիական թերթ, որ ուղենար, անկողմ-
նապահութեամբ և առանց նախապաշար-
ված մտքերի վերաբերվել դէպի արեւելեան
բոլոր ազգերը, պիտի խմբագրվէր, իսկա-
պէս, եւրոպական մի այնպիսի երկրում, որ
ոչինչ համակրութեան կապեր չունի Թիւր-
քիայի հետ, որ չէ գտնվում նրա բարոյա-
կան ազդեցութեան տակ, պէտք է խմբա-
գրվէր եւրոպական միակ միջազգային լե-
զուով, Ֆրանսերէն լեզուով և վերջապէս
մարդկեանց այնպիսի խմբով, որ ամբող-
ջութեամբ բաղկացած լինէր նոյն իսկ ա-
րեւելքում գեր խաղաղող ազգերի ներկայա-
ցուցիչներից:

Այնու ամենայնիւ չենք կարող չը խոս-
տովանել, որ Պէշտում հրատարակվող
«Revue de l'Orient» թերթը շատ լաւ և
բազմակողմանի կերպով է խմբագրվում և
այս րոպէին եւրոպայում միակ թերթն է,
որ նուիրվում է իր էջերը ամբողջապէս ա-
րեւելքի շահերին: Միայն ցանկալի կը լի-
նէր, որ խմբագիր, պ. Արման Սամվարի,
մի քանի հարցերում չը հետեւէ իր անձ-
նական համակրութիւններին և հակակրու-
թիւններին, որպէս ունգարացի, այլ իր
անձնական հայացքները այս կամ այն դէպ-
քում զոհէր արեւելքի և արեւելեան ազգերի
ընդհանուր շահերին:

Գ. Ա.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՊԱՆՈՎ ՀՈՂԵՐ ՎԵՏԵՐՈՐԴ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Ինչպէս արդէն անցեալ անգամ հաղորդեցինք,
կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ընդ-
հանուր ժողովում կարգադրեցաւ մի ղեկուցում,
որը վերաբերում էր Անդրկովկասում պետական
գիւղացիների ձեռքով կապալով հողեր վերցնելու
հարցին: Դա մի վերին աստիճանի հետաքրքիր
գիւղացիների վերաբերմամբ, որի մանրամասն ուսումնասի-
րութիւնը և հետաքրքիր և կարեւոր է. բայց, տա-
րաբարաբար, մեր երկիրը այնքան դեռ ևս քիչ
է ուսումնասիրված, որ այդպիսի մի հարցի վե-
րաբերութեամբ մասնաւորապէս մի ան զա-
մայն ձիւ չը կարողացուի ընկերութեանը ևս շատ
դժուար են: Յիշեալ ղեկուցման համար իւրեւ իւր
ծառայել են ղեկավարապէս այն «նիւթերը», որ
հաւաքվել և տպագրվել են պետական քննա-
ների միջնորդութեան կարգադրութեամբ: Ով ծա-
նօթ է Անդրկովկասի պետական գիւղացիների
ստատիստիկական կեանքի ուսումնասիրութեան վերա-
բերող այդ նիւթի և իր հետ, նա լաւ գիտէ,
որ այդ հետազոտութիւնների մէջ շատ քիչ ու-

ղաղրութիւն է դարձած այն հարցի վրա, որը
կապում է մեր վերել յիշած ղեկուցման բովան-
դակութիւնը Այդ բովանդակութիւնը բաժան-
վում է չորս մասի. 1) Կապալով հողեր վերցնելը
ընդհանրապէս Անդրկովկասում. 2) Կապալով
վերցվող հողերի քանակութիւնը, և դրա նշանա-
կութիւնը գիւղացիների համար. 3) Կապալի տե-
տակները և 4) Կապալաւոր վճարումը Զեկուց-
ման մէջ, մի շարք տեղեկութիւններ իման վը-
րա, այն միտքն է յայտնվում, որ մեր երկրի շատ
տեղերում կապալով հողեր վերցնելը դեռ ևս հա-
մայնական բնաւորութիւն ունի, այսինքն, որ
գիւղացիները միտաին, համայնաբար վերցնում են
հողեր և մշակում են այդ հողերը: Այդ երևոյթը
նկատելի է, ի հարկէ, ղեկավարապէս այն տեղե-
րում, որտեղ համայնական հողատիրութեան այս
կամ այն ձևը դեռ ևս գոյութիւն ունի: Հողերի
կապալով վերցնելը մեծ կապ ունի մեր երկրի
մէջ վաղուց արդէն տեղի ունեցող այն երևոյթի
հետ, որ թափառական կեանքը և անանապա-
հովութիւնը քիչ առ քիչ տեղի են տալիս հողա-
գործութեանը. այդ երևոյթը մի կողմից, և առ-
դարձակութեան աճելը միւս կողմից՝ դալի են
զարժել շատ տեղերում հողի պակասութիւնը,
որը իր կողմից աճեցնում է կապալով հողեր
վերցնելը, բարձրացնելով մի և նոյն ժամանակ
կապալաւորը: Համեմատելով Անդրկովկասում
կապալով հողեր վերցնելու դրոշմ Բուսաստանի
և եւրոպական մի քանի երկրների հետ, մի և
նոյն ժամանակ մատնանիլ անելով այն երևոյթի
վրա, թէ Անդրկովկասի որ կողմերում այդ բանը
աւելի առաջ է գնացել, և վերջապէս կանգ առ-
նելով կապալի տեսակների և կապալաւորման վը-
րա, ղեկուցանողը այն եզրակացութիւնները
գտնւր բերեց, որ Անդրկովկասում հողերի կապա-
լով վերցնելը կատարվում է ղեկավարապէս
կարճատև ժամանակով. և այդ բանը շատ
վնասակար է աղբում հողի պտղաբերութեան վը-
րա, հողի պակասութեան պատճառով կապալա-
ւոր Անդրկովկասում ընդհանրապէս շատ բարձր
է կանգնած, և կապալաւորի շատութիւնը շատ
տեղերում այն աստիճանի է հասնում, որ միայն
դամայն ձեռնառու չէ կարող համարվել կապալա-
ւոր-գիւղացու համար: Այդ և այդ տեսակ երե-
ւոյթների պատճառը ղեկուցանողը վերագրում է
երկրի ներկայ հանգամանքների և հողային հարցի
այժմեան լուծված դրութեան:

Ընդհանրապէս ղեկուցման մէջ շատ կետեր են
թաղրութիւնների բնաւորութիւն ունեն. և պէտք
է նկատել, որ այդ ուրիշ կերպ չէր էլ կարող լի-
նել, մի կողմից մեր երկրի վերաբերութեամբ
հարցի նորութեան պատճառով և միւս կողմից
այն պատճառով, որ այդպիսի աշխատութիւննե-
րի համար շատ քիչ նիւթ կայ, քանի որ, ինչ-
պէս վերեւում էլ ակնարկեցինք, մեր երկրի ու-
սումնասիրութեան հարցը դեռ իր սկզբնական
աստիճանի վրա է կանգնած:

ՆԱՄԱԿ ԱՆԱՅՈՒՅՈՒՅՑ

Յունիարի 26-ին

Յուրոր մեղմացաւ. արեւ իր թոյլ ճառագայթ-
ներով մերկայացրեց գետինը սպիտակ սառանից.
սահմանները մտան իրանց ննջարանը. հալվող
ձիւնի վտակները տեղ տեղ կապում են փոքրիկ
լճակներ, ցիսի պատուհները թռչելով անիւի վը-
րայից օծում են անցողիկաճ անողների վերաբ-
կուները, մինչև իսկ դադարեցնելը կարմիր արեւի
քաղցր ուշադրութիւնը մեզ վրա, ունեցաւ և իր
օգտակար ներդրութիւնը.—սթափեցաւ առաւ-
ջադէմ գործիչը, և ձեռնարկեց իր նուիրական
պարտքը կատարելու:

Ահա ուսուցիչները առաջին արձագանքը
տուին համերաշխութեամբ գործելու. նախ՝ ձեռ-
նարկեցին իրանց մտաւոր պաշարի շտեմարանը—
զրադարան-ընթերցարանը կարդի բերելու, և ապա
վճռեցին մի շարք ներկայացումներ տալու յո-
ղուտ ուսուցչական զբաղմանի: Առաջին ներ-

կայացումը պիտի լինի «Լեւոնտիկի վաճառական»,
յարգելով վարժուհիների այն ցանկութիւնը, որ
խնդրել են ազատ պահել անդրանիկ ներկայա-
ցումից, ապագաներին մասնակցելու՝ պատիւն
իրանց վերապահելով:

Ահա Բարեգործական ընկերութեան տեղական
բաժինը, ամսիս 23-ին ունեցաւ միամտայ ըն-
թացքում առաջին ընդհանուր ժողովը. դժբաղ-
դարաւ ժողովին մասնակցում էին ընդամենը
36/3 անձ. ընտրեցին ընդհանուր ժողովին նախա-
գահ, քարտուղար, վարչութեան երեք անդամներ
և երեք անձերից բաղկացեալ մի մասնաժողով
վարչութեան հաշիւները վերաստուգելու համար:
Ներկայացվեցաւ ելուածից նախահաշիւը (1888
թւականի համար), որպիսին առանց ընդունիւն,
հինգ ձայնով հակառակ չորս ընդունեցաւ ժո-
ղովից: Հետաքրքրութիւնից զուրկ չէ այն կետը,
որ վարչութիւնը միշտ մտցնում է իր նախահաշ-
ւի մէջ մի այսպիսի յօդուած.—«Թատերական ներ-
կայացումներից (մուտք) յետոյ լուրի», և երբ
նկատվեցաւ այդ մասին, թէ երբեք չէ կարելի
սպասել այդպիսի եկամուտ, հիմնովկով անցեալ
տարիների վրա (որ միշտ գրվում էր և մնում
նախահաշիւի մէջ մեռած տաւ): Երբ ուսու-
ցիչներից մէկը հաստատեց նկատողութիւնը
թիւնը, թէ ուսուցիչների վրա յոյս դնել ապար-
դիւն է, ահա այդ ժամանակ նորոշար վարչու-
թեան անդամներից մին ապահովացրեց, որ եթէ
թատերական ներկայացումն ևս չը լինի, գոնէ
կարելի է սպասել այդ մուտքը «աղբերից», որ
նրանք մտադիր են խաղալու կուրտու, յատկա-
նելով արդիւնքի մի մասը վրաց ս. Նուրիայի ի-
գական դպրոցին, միւսը յօդուտ Բարեգործական
ընկերութեան ֆօնդին Տայ Աստուած. սպասեմք:
Իսկ ինչ վերաբերում է, թէ Բրանս օրինակը էր
այդ ժողովը, Բրանս արդիւնաւոր պիտի լինի այդ
ժողովի հետեանքը, անշուշտ կը յայտնվի է մօտիկ
ապագայում: Ընդհանուր գործի վերաբերութեամբ
իմ նկատողութիւնները պատիւ կունենամ ուղար-
կել «Մշակի», հաշիւները վերաստուգելուց յետոյ:

Ահա քաղաքային վարչութեան մի ամից ա-
ւելի դատաւարութեամբ փակ դռները այսօր բաղդ
պիտի ունենան բացվելու իրաւասունների առաջ,
որոնք հրաւիրված են մի քանի հարցերի վերա-
բերութեամբ.—ղեկավարապէս տաան և երկու ա-
մեայ հաշիւները վերաստուգելու համար ընտրել
մասնաժողով, մեր «աղջամիջային» կամուրջի վե-
րանորդութեան հարցի առթիւ:

Ահա և Զէյթունի հիւրընկալներին նպաստելու հա-
մար ընտրված յանձնաժողովը, օգտակար ծիրա-
նափայլ արեւակից, այսօր, քառասունորեայ հան-
գստութիւնից յետոյ, շարունակում է հանգանա-
կութիւնը, յոյս կայ մինչև 400 ռուբլի հասցնե-
լու. աւելին էլ սպասել կարելի չէ, քանի որ Ա-
խալխալի ֆինանսական դրութիւնը ձգնաժամի
մէջ է:

Վաճառականութիւն չը կայ. մանրաւաճառը
յօրանջում է և քնից և արտադրութիւնից, որ նը-
րան չեն արժանացնում, գոնեա մասնահատի հա-
մար այցելելու. երկրագործը և սևաբաղդ մշակը
ծիծեռնակի գալտեան են սպասում, զինուորա-
կան, հողերական և քաղաքային առձիկաւոր ծա-
ւալողները միշտ դրաղված են օրացուցը թերթե-
լով, «20» թիւը շուտ գտնելու համար: Կայ մի-
այն մի դասակարգ, որ արթնում է միշտ տարվայ
չորս եղանակներում.—դա մեր արհեստաւոր դա-
սն է: Երկաթագործը մուրճը ձեռին արեան ջըր-
տինը թափելով խփում է շիկացած երկաթին
զանազան ձև տալու համար: Խաղաղութիւնը՝ սառը
ջրի մէջ կոխտուում է կաշին փափկացնելու հա-
մար, նրա մերկ սրունքները և պինդ ջիւրը կապ-
տում են արեան յորդառաւ հոսանքից: Արծա-
թագործը՝ փոքրիկ խարտոյը ձեռին հարթում է
պնաստիկ դարբարանները, և երբեմն քուրայից
Ֆոսֆորանի արծաթին և ոսկին լցնում է ձու-
լարանի մէջ, խանձելով բեխերը և շատ անգամ
էլ ձեռների այս կամ այն մասը: Կօշիկաւոր
նոյնպէս ձեռից չէ վեր ձգում հերոսն և մուշտան
Նրանք Ալաւի հարազատ ժառանգներն են և

նախախնամութեան վճար ճշմարիտ դաւաններ.— իրանց ճակատի հալալ քրտինքով, հալալ կեանք վայելողներ: Այս, մեր արհեստաւորը բաղդաւոր տարրն է կազմում միւս դասակարգերի մէջ: Արհեստը հաստատ տղերք է ապրուստի, որքան և ճախի, այնու ամենայնիւ ջանասէրի համար անսպասելի: Ախալցխայի հայ արհեստաւորը զրկված չէ և բնական տաղանդից. նրա շնորհալի ձեռագործը արտադրվում է և շատ հեռավոր երկրներ: Այն մեր արհեստաւորների մէջ և այնպիսի բացառական հանճարներ, որոնց մասին երբեմն լրագրի միջոցով յայտնելը դուրի չը պիտի լինի հետաքրքրութիւնից:

Ախալցխայում կան Չիֆուալարեան աղանու-նով երկու հարազատ եղբայրներ, որոնք մասնկու-թիւնից մինչ ցարդ աշխատում են մի և նոյն զինագործարանում: Նրանք ունեն ստացած մըր-ցանակների զանազան պատուանշաններ թէ Ռուսիայից և թէ արտասահմանից (ֆարսիցից, լանդոնից): Այժմ դրանց յաջորդները գերազանցում են իրանց շնորհով իրանց ծնողներին: Յոյց տուէր նրանց ինչ սխտեմի որ կամենաք Պիպոզի, Մարտինի, Մնէյ-դէններ, հրացաններ, բնօրվորներ, կամ այլ բա-ղադրեալ մեքենաներ, նրան կարող են շինել ճշգ-րէն նոյնամանը և թէ նորոգել աւելւած մասերը իրանց սեփական, ձեռագործ մեքենաներով. չա-փազանցութիւն չէ դրան, այլ իսկութիւնից փո-քը ինչ պակաս: Անցեալ օր դրանց կրտսեր որ-դի Նիլիան ներկայացրեց մի տեսակ նոր, ինքնա-հնար սրնիք, որին ինքն անուանում է «կալիլ».— դա ֆլէյտի և կլարնետի նման մի տեսակ գործիք է յարմարեցրած հսկայական նոտաներով երգելու. երևէջները այնքան պարզ և հնչիւնն այնքան զուրկան, որ ամենափորձված կապելմէյստերն անգամ կարող է հրապուրվել: Մեր քաղաքի յայտ-նի սրնգահար Ղազրոն ապշած մնաց այդ գործի-քի վրա, երբ առաջին փորձով համոզվեցաւ. թէ որքան յաջողակ կերպով կարելի է նուագել դրա-նով: Հնարողն ինքն ևս ծանօթ է նուագածու-թեան արուեստին. այդ «կալիլ» արժէքն է ութն ռուբլի. ընդունած է մի քանի պատուէրներ: Հատկապէս խորհուրդ տուին այդ գործիքից եկող 1889 թուականին ֆարսիքի աշխարհահանդէսը ու-ղարկելու, ոչ թէ իր տեսակների մէջ իբրեւ չնաշ-խարհիկ գիւտ, այլ հայ արհեստաւորի ձեռագործ ստեղծագործութեան տաղանդի մէջ ունեցած մի փոքրիկ շնորհը, որի հնարողն եթէ տեսնական օրինակով կրթութիւն ստացած լինէր, գուցէ ա-ւելի օգտակար և հանրաշահ գիւտեր կարողանար արտադրել, բայց դեռ ևս ներկայ պայմաններում կարելի է սպասել Չիֆուալարեանցներից շատ և շատ առաջադիմութիւններ:

Մի նոր առաջադիմութիւն ևս նկատվում է մեր առևտրական դասակարգի մէջ. դա է ընկերու-թիւնների կազմելը: Մօտիկ օրերումս կազմվեցան չորս ընկերութիւններ.— երկու. նաւթավաճառնե-րի, որոնք արդէն բաց արած են նաւթի շտեմա-րաններ քաղաքից հեռու. (կենտրոնում մանրա-ծախս նաւթ վաճառելը արգելված է, և չորս օրում այդպիսի կրպակները մաքրվելու են նաւթի վաճառելուց). մի օգնականներին ընկերութիւն. անցեալ տարվայ երեք սկզբների փոխարէն, միանալով այժմ կայ մի սկիւղ օղիի, և մի կա-պալաւունների. վերջինի նպատակն է, փոխա-նակ զանազան պօղորդանքներով միմեանց դէմ մրցելու և վնասելու, ընդհանուր համաձայնու-թեամբ վերցնել կապալ մէկի կամ միւսի անու-նով և արդիւնքն հաւասար բաժանել. (այդ ընկե-րութեան պայմանագրերը ինձ յայտնի չը լինելով մանրամասնութիւններին մասին երաշխաւոր չեմ): Զը գիտեմ այդպիսի նպատակներով կազմված ընկերութիւնները օգտակար կարող են լինել թէ վնասակար, սակայն ցանկալի էր, որ ի չարն չը գործադրէին իրանց զիջը ժողովրդին հարստա-հարկու և եղական չափերի համար:

Ա. Ա.

ՆԱԽԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՅ

Յունվարի 23-ին

Ախալքալաքը, ինչպէս և շատ ուրիշ մանր գա-ւառական քաղաքներ, որոնք չունեն քաղաքային ինքնավարութիւն, ամենայն տարի գործերը կառավարելու համար ընտրում է իր երկու քա-ղաքացի, որոնք կոչվում են ղէպուտատ և որոնք հաստատվում են իրանց պաշտօնում նահանգա-պետից: Առաջ Ախալքալաքում ղէպուտատներ

ընտրվում են եղել միշտ մահտեսի-աղայական դասակարգից, որոնք անհամեմատաբար աւելի ազդեցութիւն են ունեցել քան այժմեանները, և այդ իսկ պատճառով եղել են քաղաքում անձնավարութիւններ, որ 6—10 տարիներ շա-րունակ վարել են այդ պաշտօնը: Այժմ ղէ-պուտատներ ընտրվում են, շատ քիչ բա-մասովս էլ պաշտօնին անընդունակ անձնավարու-թիւններից: Ներկայումս, տարաբաղաբար, ժողո-վրդի առաջ այդ պաշտօնը այն աստիճան ստորացել է, որ ամեն մարդ մի առանձին հեղ-նութեամբ է վերաբերվում դրան. ամենքը պանա-զան միջոցներով աշխատում են փախչել ղէպու-տատութիւնից և ամեն կերպ աշխատում են ընտրված չը լինել: Գիտեմ քաղաքում մի նշանա-ւոր վաճառական, որ ղէպուտատ չընտրվելու համար սրանից մի 5—6 տարի առաջ խոստա-ցաւ հասարակութեանը մի ուսումնարան շինել իր ծախսով: Այդ բոլորը ի նկատի ունենալով, դարմանալի չէ, որ այս տարվայ ղէպուտատների ընտրութիւնն էլ աշխուժած չէ կարելի համարել, և դրանց գործունէութիւնից մի առանձին բան չէ կարելի սպասել:

Մի քանի խօսք էլ ուսումնարանների մասին. առհասարակ չէ կարելի ասել, որ տեղիս երկուս-ուսումնարաններից միտ դրութեան մէջ լինեն, բայց մօտ ժամանակներս երեան եկան այնպիսի հանգամանքներ, որոնք նպաստաւոր չեն կարող համարվել ուսումնարանների համար: Հողաբար-ձական խմբի անդամների մէջ երկուս է անհա-մերձախոթիւն և խմբի նախագահը՝ որը ձեռն-հաս է և որի նոյն իսկ պարտականութիւնն է այդ տեսակ ղէպերում անախորժ ղէպերի ա-ռաջ առնել, բոլորովին անտարբերութեան է մասնել իրան և չէզոք դիրք է ընդունել. խմբի մէջ կան և բոլորովին իրանց պաշտօնին անհա-մապատասխան անձնավարութիւններ, որոնց աս-պարէզից հեռանալը ցանկալի է: Ուսուցչական խումբը թէև բաւական լաւ է կազմակերպված, բայց այժմ մի երկու անձանց ինտրիգաների շնորհով այդ խմբի մէջ ևս գոյութիւն ունեն դանազան կուսակցութիւններ և թշնամութիւններ:

Ախալքալաքի ընկերացարանը, շնորհով նոր վարչութեան, բաւական լաւ դրութեան մէջ է, բայց հասարակութիւնը բոլորովին չէ հետա-քրքրվում նրանով. նրա միակ պահպանողը և նրանով հետաքրքրվողը օտարների մի փոք-րիկ խմբակ է, ծառայող դասակարգից: Անցեալ տարվայ վերջերին տեղացի մի օրիորդ զրկեց ըն-թերցարանում. սա առաջին ղէպերն է Ախալքա-լաքում, որ կանանց սեռի մի անդամը ցանկու-թիւն է յայտնում, կամ նոյն իսկ կարել է ըզ-գում, անմիջապէս մասնակցութիւն ունենալ հասարակական գործում:

Մեր քաղաքում ունենք և աղքատների հոգա-տար հոգաբարձութիւն, բայց չը դիտենք տալիս է արդեօք այդ հոգաբարձութիւնը մի որ և է հաշիւ իր գործունէութեան մասին. մի այսպիսի բարեկամաւոր մարմին ունենալը և այն էլ Ախալ-քալաքի նման քաղաքում, ուր ոչ հիւանդանոց, ոչ անկիւանոց, և ոչ մի բարեգործական հիմնարկու-թիւն կայ, մեծ բարիք է: Այս տարի ծառայող դասակարգը և մի քանի քաղաքացիներ նոր տար-վայ և յետագայ տօնների սովորական այցելու-թիւնների փոխարէն նուիրատուութիւն արեցին, որից և հաւաքվեց մօտ 50 ռուբլի. այս գումարը պէտք է ծառայեցնեն աղքատ հիւանդներին դե-ղորայք մատակարարելու:

Զ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Կարապետ Մուրաֆեան, ի նպատակ Զէյթու-նի հրկիւղեանքի թիֆլիսում կազմված մասնագի-ղովի զանապաղը, տեղեկացնում է մեզ, որ սըր-բազան առաջնորդի ձեռքում յօդուտ հրկիւղեանք-րի հաւաքվել է այլ և այլ աղբիւրներից զարձեւ 1233 ռ. 91 կ.: Այդ գումարից 200 օսմանեան վրա արդէն ուղարկվել է հեռադրով Կ. Պոլսի մասնագիղովի ատենապետ Պատրիկ էֆէնդի Կուլպէկեանին: Նոյնպէս հեռադրով ուղարկ-վել է նրան և 2050 ռուբլի, որ ստացվել է «Մշակ» խմբագրատանը Աստրախանի հայերից:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ մեզ գրում են, որ յունվարի 24-ին այդտեղի կուլուրտ տեղի ունեցաւ պարահանդէս յօդուտ Գալիանեան օրիորդաց զարդից: Այս տա-

րի այնքան աջող չէր պարահանդէսը և անցեալ տարվայ նման արդիւնք չը տուէր: Անցեալ տա-րի հոգաբարձութիւնը շատ էին աշխատում տու-սակ ծախելու, իսկ այս տարի հոգաբարձութիւնը հրաժարված լինելով իրանց պաշտօնից, մինչև ան-գամ պարահանդիսի երեկոյին հոգաբարձութիւնից միայն մէկն էր ներկայ գտնվում: Գովելի են տի-կին Տէր-Սարգսեանի և օրիորդ Մէլիք-Աղամալեան-ցի ջանքերը զարդի արդիւնքը շատացնելու:

Մեզ գրում են ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ, որ այս տարի առև-տուրը այդ քաղաքում կատարակապէս բնկած դը-րութեան մէջ է: Այս երկու շաբաթ է արդէն, որ դա փախի տակ ոչ մի միջերը չեկաւ, մանա-ւանդ բացակայ է բամբակը: Գիւղացիները իմա-նալով Նրեանում առևտրական գործերի ընկած դրութիւնը, երկմտում են տանից դուրս գալ և միջերը բերել քաղաքը, վաճառելու. նպատա-կով:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՅ յունվարի 20-ից ուղարկված է մեզ հետեւեալ նամակը: «Այստեղ եղանակը շատ ցուրտ է, այնպէս որ ցերեկով ցուրտը հա-նում է 15 աստիճանի, իսկ դէշեր ժամանակ 20 աստիճանի: Մեզ մօտ տարածված են այժմ այլ և այլ տարախոթիկ հիւանդութիւններ, ինչպէս՝ տիֆ, կարմրուկ և ծաղիկ, որոնք բաւական դժու-ր են տանում, մասնաւոր ժանտկէսերից: Առևտուրը և ամեն գործերը մեղանում կատարելապէս՝ ըն-կած դրութեան մէջ են, և այդ պատճառով սկը-սել են շատանալ մեղանում ամեն տեսակ գոգու-թիւններ և մարդասպանութիւններ: Այն աստի-ճանի է դարձացել գոգութիւնը, որ գոյրը մին-չև անգամ տան կտուրը ծակում են և այնտեղից ցորեն կամ ալիւր են գողանում»:

Զէյթունի հրկիւղեանքի օգտին կօնցէրտ կաղ-մող մասնագիղով խնդրում է մեզ յայտնել, որ յունվարի 23-ին թիֆլիսի ժողովարանում տուած կօնցէրտի մուտք գոյացաւ 1,183 ռուբլի, որից 23 ռուբլին նուէրներ են: Ծախք եղել է 182 ռուբլի 80 կօպէկ, որը հանելով մուտքից, մնա-ցած գումար արդիւնքը՝ 1,000 ռուբլի 20 կօպ. ար-դէն ներկայացված է թիֆլիսի առաջնորդ Արիս-տակէս եղիպիտովին: Գրա հետ միասին մաս-նագիղով պարտք է համարում իր շնորհակալու-թիւնը յայտնել կօնցէրտին մասնակցող անձանց, և այն խմբագրութիւններին, որոնք կօնցէրտի յայտարարութիւնը տպագրել են ձրիաբար:

ԿԱՐՍԻՅ մեզ գրում են. «Սրանից 5 ամիս ա-ռաջ Սուրբաս եպիսկոպոս Պարեանցի շնորհով կարսում կայացաւ մի հասարակական ժողով և կազմվեցաւ մի համեստ գումար յօդուտ նոր կա-ռուցանելի եկեղեցու, որը սկսելու համար ամեն ինչ պատրաստ է, և գարունը բացվելուն պէս գործը կը սկսվի»:

Մեզ գրում են ԿԱՐՍԻՅ հետեւեալը. «Հոգևոր խիստութիւնը աչքի առաջ ունենալով կարսի զարդների թշուառ դրութիւնը, Տալար անուա-նեալ վարելահողերի տարեկան 700 ռ. եկամուտը յատկացրեց տեղիս զարդներին: Բայց այդ հոգե-րի կապալաւուն ոչ միայն մտադրութիւն չունի այդ հրամանը կատարելու, այլ մինչև անգամ դատ է ուղում բացանել և մեծ վնաս է պահան-ջում, առարկելով թէ պայմանագրի համաձայն վարելահողերը իրան չեն յանձնել ամբողջապէս»:

ՂՈՒԲԱՅԻՅ մեզ գրում են. «Այս կողմերի ժո-ղովրդը բաղադրած լինելով մեծ մասամբ լեզգի-ներից, թուրքերից, թաթերից և մի երկու գիւղ հայերից, ինչպիսի են՝ խաչմաղ և Բիլվար գիւղե-րը, եթէ չասենք բոլորը, դրեն մեծամասնու-թիւնը, այժմ գտնվում է զարգացման ամենա-ստոր աստիճանի վրա. ինչ ասել կուզէ, որ մեր երկու գիւղերը դարերով գտնվելով թուրք և ու-րիշ հարեան աղաքանակութեան աղղեցութեան ներքոյ, իւրացրել են տիրող ժողովրդի թէ սովո-րութիւնները և թէ լեզուն, մուսուլմանութեան տալով մինչև անգամ մայրենի լեզուն և առաջ էլ չեն գնացել իրանց զրացիներից կրթութեան գործում: Հատ ցանկալի կը լինէր, եթէ ուզ դարձնէր այդ գիւղերի վրա, նպատակ հիմնելու մի որ և է փոքր ի պտէ կանոնաւոր դպրոց, որը կարող լի-նէր մայրենի բարբառը տարածել թրքաբառ ժո-ղովրդի մէջ: Եթէ նոյն իսկ միայն ժողովրդի ա-ւանդութեանը ուզ դարձնենք, կը համոզվենք, որ

շատ ժամանակ չէ անցել այն օրից, երբ այդ կողմերում գոյութիւն ունէին շատ հայաբնակ գիւղեր, որոնք զո՛հ գնացին: Շրջելով Ղուրայի գաւառներում, դուք պատահում էք հին գերեզ-մանատների, մի փոքր ուշադրութեամբ գննելով մնացած գերեզմանաքարերի տապանադրերը, դուք համոզվում էք, թէ մի ժամանակ այստեղ հայոց գերեզմանատուն է եղել, այդ գերեզմանատները ճշմարիտ ապացոյցներ են ժողովրդի պատմած աւանդութեան, թէ մի ժամանակ այս երկիրը բնակեցրած է եղել հայերով, թէ մի ժամանակ հայի ձեռքն է մշակել այդ ընդարձակ և պտղա-տու դաշտերը, իսկ այժմ այդ բոլորից միայն եր-կու գիւղեր են մնացել, նրանք էլ թրքաբառ են»:

Ղուր մեզ, որ հրկիւղեալ դէյթունցիների նը-պատող յանձնագիղով նախաձեռնութեամբ շու-տով տրվելու է մի հայերէն ներկայացում հրկի-դեաների օգտին: Խաղաղուհիները զխաւորապէս լինելու են սիրողները և պէտք է խաղացվի Վ. Կրիլովի «Նիտանք» կօմիդիան:

Այսօր, փետրվարի 2-ին, ժամը 12-ին, թիֆ-լիսի իգական դիմնադիւլի դահլիճում կը կայա-նայ «Թիֆլիսի վարժուհիների փոխադարձ օգնու-թեան ընկերութեան» ընդհանուր ժողովը: Ի մի-ջի այլոց ժողովը պէտք է դադարի ընթերցարան հիմնելու հարցով: Ժողովին ներկայ կարող են լինել և կողմնակի անձինք:

Գրիգորի քահանայ Մատինեանց խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Յանկանալով հայ բան-տարկեալների համար թիֆլիսի նահանգական բանտում զրադարան կազմել, խնդրում եմ յարգոյ հեղինակներին, թարգմանիչներին և գրքեր հրա-տարակողներին և այն բարեմիտ անձանց, որոնք կը ցանկանան նուրիւր այդ նպատակի համար մէկ մէկ օրինակ թէ հայերէն և թէ ռուսերէն գրքեր, բարհաճան ուղարկելու մեզ հետեւեալ հաս-ցեով: Тифлисть, на Аглабаръ. Тюремному свя-щеннику Григорису Матинянцъ»:

Շաբաթ օր, յունվարի 30-ին, թիֆլիսի ժողո-վարանում կայացաւ նուագահանդէս յօդուտ «Թիֆլիսի վարժուհիների փոխադարձ օգնութեան ընկերութեան»: Նուագահանդէսի ծրագիրը բաւա-կան լաւ էր կազմված և այդ պատճառով նուա-գահանդէսը անցաւ բաւական աշխոյժ կերպով: Դահլիճը լիքն էր: Նոյն երեկոյեան աղետական-ների բանկի թատրոնում կայացաւ պարահանդէս վիճակախաղով. յօդուտ երկրորդ դիմնադիւլի չքաւոր աշակերտներ: Թատրոնն էլ գրեթէ լիքն էր հասարակութեամբ: Պարը շարունակվեց հա-մարեա մինչև առաւօտ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԹԻՒՐԻՍԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Վերջին ամիսներում թէ Պոլսից, և թէ եւրօ-պական երկիրներ ժայրաքաղաքների դիպլոմա-տիական շրջաններից դուրս բղխած լուրերը ա-ւելի ու աւելի են հաստատում այն կարծիքը, թէ գերմանական կառավարութիւնը ամեն ջանք գործ է դնում ոտը դնելու ֆրեյ-Սիլայում, ամեն ջանք գործ է դնում ամբարնալու քաղաքական տեսակէ-տից մի այնպիսի նշանաւոր տեղում, ինչպէս են ֆրեյ-Սիլան և Հայաստանը: Այդ նպատակին գերմանական կառավարութիւնը ձգտում է ոչ թէ զիպլոմատիական բացարձակ ճնշումներով, այլ խաղաղ, բարեկամական, բայց մի և նոյն ժամա-նակ արմատական միջոցներով: Այդ խաղաղ և բարեկամական բնաւորութիւն ունեցող ընթացքով գերմանական կառավարութիւնը արդէն բաւական ազդեցութիւն է ձեռք բերել Պոլսում, Բ. Գլանս վրտ: Թիւրքաց պետութեան մայրաքաղաքի մէջ շատ հարցեր վճվում են գերմանական կառավա-րութեան տեսակէտին համաձայն. և Սուլթանը՝ կամայ թէ ակամայ՝ ստիպված է միշտ սիրալիւր լինել թէ դէպի գերմանական դեսպանը և թէ դէ-պի գերմանական շահերը: Բայց այդ սիրալիւր յարաբերութիւններով չէ վերջանում խնդիրը: Գերմանական աղղեցութիւնը արդէն բաւական արմատներ է դրել թիւրքաց պետութեան մէջ: Հէջն այս բոլորից գերմանացի սպաները մեծ տեղ են բռնում թիւրքաց զինուորային վարչութեան մէջ, և ինչպէս երևում է բոլոր լուրերից, թուրք

